Հավելված N 3
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 31-ի N 1148 - Ա որոշման

ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի (այսուհետ՝ թատրոն) նոր շենքը նախատեսված է տեղադրել Անրի Վերնոյ փողոցի երկարությամբ: Շենքը բաղկացած է լինելու երկու հիմնական մասից՝ հասարակական ու վարչական: Շենքի հասարակական մասի առանցքային չափերը կազմում են 33 x 18.5 մետր, իսկ վարչական մասի չափերը՝ 26.5 x 7.5 մետր: Հարկայնությունը նախատեսված է՝ երկու վերգետնյա հարկ հասարակական մասում և երեք վերգետնյա հարկ վարչական մասում: Առավելագույն բարձրությունը բեմական տուփի հատվածում նախատեսված է մոտավորապես 21 մետր:

2. Շենքի ամբողջ կառուցապատման մակերեսով նախատեսվում է ստորգետնյա հարկ, որը ներառում է ավտոկանգառ մոտավորապես 20 մեքենայի համար: Ստորգետնյա մասը թատրոնի ֆունկցիոնալ տարածք չէ և տնօրինվելու է կառուցապատողի կողմից:

3. Թատրոնի գլխավոր մուտքը կազմակերպվում է Անրի Վերնոյ փողոցից: Առաջին հարկում նախատեսվում է մոտավորապես 240 քառ. մետր մակերեսով գլխավոր նախասրահ, հասարակական հանդերձարանով, սանհանգույցներով, բուֆետով: Նախամուտքին կից նախատեսվում է դրամարկղ և հերթապահ ադմինիստրատորի սենյակ: Գլխավոր մուտքին կից նախատեսվում է բացօթյա սրճարան, որն սպասարկելու է ինչպես թատրոնի հանդիսատեսներին, այնպես էլ այլ հաճախորդների: Վարչական հատվածում նախատեսվում են փորձերի դահլիճներ, ծառայողական սանհանգույցներ, ռեկվիզիտի, դեկորացիաների պահեստներ, արհեստանոց: Մեծածավալ դեկորացիաների տեղափոխման համար նախատեսվում է ավտոմեքենայի բոքս՝ բեռնավորման սրահով և բեռնամբարձիչ:

4. Երկրորդ հարկում նախատեսվում են նախասրահ շքասանդուղքով, դահլիճ՝ մոտավորապես 300 հանդիսատեսի համար, բեմ՝ կուլիսներով ու բեմի գրապաններով, լույսի և ձայնի կառավարման սենյակ: Վարչական հատվածում նախատեսվում են դերասանական սենյակներ, դերասանների սպասասենյակ, սանհանգույցներ:

5. Երրորդ հարկում նախատեսվում են վարչական սենյակներ, այդ թվում՝ տնօրենի ու գեղարվեստական ղեկավարի առանձնասենյակներ, աշխատասենյակներ, սանհանգույցներ:

6. Շենքի ջեռուցման կարիքների համար տանիքում նախատեսվում է կաթսայատուն:

7. Շենքում նախատեսվում են 1 շքասանդուղք ու 2 էվակուացիոն սանդղավանդակներ:

8. Շենքը լիովին հարմարեցված է լինելու սայլակով տեղաշարժվող հաշմանդամների համար: Նախատեսվում են մուտքի թեքուղի, հաշմանդամների սանհանգույց, ամբարձիչ՝ նախասրահից մինչև դահլիճ:

9. Ընդհանուր տնտեսատեխնիկական տվյալները՝

1) հողամասի կառուցապատման մակերես	870 քառ. մետր
2) ընդհանուր արտաքին չափերով մակերես 0,0 նիշից ցածր	870 քառ. մետր
3) ընդհանուր արտաքին չափերով մակերես 0,0 նիշից բարձր	1900 քառ. մետր
4) շինարարական ծավալ 0,000 նիշից բարձր	14500 խոր. մետր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ